

«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Ավարտական աշխատանք

Թեմա՝ «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկայի ուսումնասիրման առարկան, նպատակը, խնդիրները

Ուսուցիչ՝

Նարինե Դոյնամայան

Երևանի Նաիրի Զարյանի անվան հ 130 հիմնական դպրոց ՊՈԱԿ



ԵՐԵՎԱՆ 2021

**«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկայի
ուսումնասիրման առարկան, նպատակը, խնդիրները**

Մարդկության գոյության ողջ պատմության ընթացքում մասնագետների կողմից մշակվել և առաջադրվել են շրջակա միջավայրի ճանաչման բազմաթիվ եղանակներ, նրա առանձնահատկությունների բացահայտման սկզբունքներ ու մոտեցումներ:

Անառարկելի է, որ մարդն ի սկզբանե կենդանի էակ է, բնության գոյության ձևերից մեկը, սակայն ապահով և անվտանգ կենսագործունեության համար նաբնության ներսում ստեղծել է ինքնատիպ մշակույթի արհեստական աշխարհ՝ «երկրորդ բնություն»:

Ակնհայտ է, որ II-IV դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության հենքային առանցքը մի շարք գիտությունների՝ աշխարհագրության, կենսաբանության, էկոլոգիայի, հասարակագիտության, տնտեսագիտության, ֆիզիկայի, քիմիայի, առողջ ապրելակերպի, սոցիոլոգիայի և իրավունքի վերաբերյալ գիտելիքների տրամաբանորեն հիմնավորված ինտեգրումն է:

Տարրական դպրոցում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է ձևավորել պատասխանատու և հոգատար վերաբերմունք բնության, մարդկանց, շրջակա միջավայրի նկատմամբ, տարրական գիտելիքներ հաղորդել բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, երկիր մոլորակի վերաբերյալ: Առարկայի բովանդակային բաղադրիչներն ընձեռում են նրա ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, դասընթացի յուրացման համար անհրաժեշտ մանկավարժական պայմանների մշակման հնարավորություն:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան ունի էկոլոգիական դաստիարակության մեծ ներուժ: Առարկայի բովանդակության ուսումնասիրման ընթացքում սովորողները ծանոթանում են շրջակա աշխարհին, այնտեղ կատարվող բնական երևույթներին, օբյեկտներին, մարդ-բնություն փոխհարաբերություններին, սովորում են ճանաչել իրենց օրգանիզմը, յուրացնում օրգանիզմի խնամքի և հիգիենայի կանոնները, ձեռք բերում հաղորդակցվելու, համագործակցելու կարողություններ, ձևավորվում է էկոլոգիական գիտակցություն, առողջ ապրելակերպի մշակույթ:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման մեթոդիկան համարվում է առանձին, ինքնուրույն գիտաճյուղ և ունի իր ուրույն տեղը գիտությունների համակարգում:



**«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի բովանդակության ընտրության
առանձնահատկությունները**

Տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի ուսումնասիրումը նպաստում է՝

- կրտսեր դպրոցականների կողմից կյանքի և բնության ճանաչողության փոարձ կապերի բացահայտմանը,
- էկոլոգիական գիտելիքների, վարքի նորմերի յուրացմանը, նրանց բարոյական որակների զարգացմանը, արժեհամակարգի ձևավորմանը,
- սեփական կարողությունների բացահայտմանը, ինքնաճանաչմանը, առողջ ապրելակերպի մշակույթի տարրերի ձևավորմանը,
- հիմնական դպրոցում դասավանդվող հենքային դասընթացի յուրացմանը նախապատրաստմանը:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի գործառնություններն են.

1. **Կրթական գործառնությո՛ւն՝** «Բնություն-մարդ-հասարակություն» համակարգի վերաբերյալ պատկերացումների, հասկացությունների ձևավորում, այդ համակարգում գործող օրենքների, օրինաչափությունների, փոխադարձ կապերի մասին գիտելիքների յուրացում, աշխարհի ամբողջական պատկերի ձևավորում:
2. **Զարգացնող գործառնությո՛ւնը** ենթադրում է սովորողների հոգեբանական, անձնային զարգացում, վերլուծելու, համադրելու, գլխավորը երկրորդականից տարբերելու կարողությունների, գիտական աշխարհայացքի ձևավորում:
3. **Դաստիարակչական գործառնությո՛ւնը** ներառում է երեխայի սոցիալականացման խնդիրը և միտված է աշխարհի նկատմամբ հուզաարժեքային վերաբերմունքի ձևավորմանը, հասարակայնորեն նշանակալի բարոյական որակների, վարքի նորմերի պահպանման կարողությունների զարգացմանը:
4. **Մշակութաբանական գործառնությո՛ւնի** շնորհիվ կրտսեր դպրոցականը հաղորդակից է դառնում ազգային, համամարդկային մշակութային ժառանգությանը, սովորում է արժևորել ազգայինը՝ որպես մշակույթի դրսևորման կարևոր ձև:
5. **Նախապատրաստական (նախնական գիտելիքների հաղորդման) գործառնությո՛ւն** ապահովում է կրտսեր դպրոցականների կողմից ինչպես բնագիտական (կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն), այնպես էլ հումանիտար (պատմություն, գրականություն, հասարակագիտություն և այլն) գիտելիքների, գիտական հասկացությունների յուրացումը:

Այսօր բավականին հազվադեպ երևույթ է, երբ սովորողը յուրացնում է ուսումնական առարկայի բովանդակությունը, ունի գիտելիքների որոշակի պաշար, սակայն ունակ չէ դրանք կյանքում ինքնուրույն կիրառելու, համադրելու, համեմատելու, գնահատելու: Ի՞նչն է պատճառը, որ սովորողի յուրացրած գիտելիքներն անձնային նշանակություն ձեռք չեն բերում, չեն կիրառվում, չեն դառնում նրա սեփականը: Ինչ խոսք, պատճառները տարբեր են ինչպես դրանց բնույթի, այնպես էլ առաջացման տեսանկյունից:

Պատճառներից առաջինն այն է, որ սովորողը չի պատկերացնում, թե ձեռք բերած գիտելիքն ի՞նչ դեր, նշանակություն ունի իր կյանքում, որտեղ և ինչ պայմաններում կարելի է այն կիրառել: Այդ պատճառով հանրակրթական դպրոցն ընդհանրապես, տարրական դպրոցը՝ մասնավորապես պետք է պարզի ոչ միայն սովորողների կողմից կրթության բովանդակության պարտադիր նվազագույն բաղադրիչի յուրացման մակարդակը, այլև ճանաչողական, արժեկողմնորոշիչ և հաղորդակցական խնդիրների լուծման նպատակով յուրացված գիտելիքները գործնականում կիրառելու նրանց կարողությունը:

Ակնհայտ է, որ գիտելիքի հավաստիությունը, գործնական նշանակությունը բացահայտվում են որոշակի հանգամանքներում, իրավիճակներում, մինչդեռ ուսուցման գործընթացում գրեթե բացակայում են ուսուցչի կողմից կյանքի իրավիճակների դիտարկումը, վերլուծումը, քննարկումը: Քանի որ կրտսեր դպրոցականը չի կարող առանց մեծահասակների աջակցության լիարժեքորեն կողմնորոշվել որոշ իրավիճակներում, օրինակ՝ ինքնուրույն օգտվել գազօջախից, վերելակից, ապա առաջին հայացքից անվտանգությանը վերաբերող գիտելիքները նրա համար արդիական չեն: Խուսափելու համար նման միակողմանիությունից ուսուցիչը ուսուցման գործընթացում պետք է կիրառի մանկավարժական մոդելավորման բոլոր հնարավորությունները՝ պլանավորի, նախագծի որոշակի իրավիճակներ, որտեղ գործնականում կկիրառվեն յուրացված գիտելիքները: Հարցին կարելի մոտենալ մեկ այլ տեսանկյունից՝ կարևորել երեխայի անձը՝ առաջնայնությունը տալով այն գիտելիքներին, որոնք կնպաստեն յուրաքանչյուր սովորողի անհատական զարգացմանը և նրա համար կունենան կենսական նշանակություն:

Կարևոր պատճառ է նաև այն, որ շատ հաճախ անտեսվում է սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնախնդիրը: Ցավոք, այսօր ոչ բոլոր ուսուցիչներն են կարևորում երեխայի մտահորիզոնի ընդլայնման, նրա ընդհանուր մշակույթի ձևավորման խնդիրը: Ուսուցիչն իր հիմնական նպատակը համարում է ուսումնական ծրագրերին հետևելը և նշված ժամանակահատվածում կրթական չափորոշիչներով նախատեսված պահանջների կատարելը: Այնինչ կյանքը թելադրում է իր պահանջները՝ օրեցօր բարձրացնելով մասնագետին ներկայացվող որակական

չափանիշները, իջեցնելով մարդուն բնորոշող բարոյական հատկանիշների գնահատման սանդղակը:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը հնարավորություն է տալիս ձևավորել բարոյական, էկոլոգիական արժեքներ, որոնք բնութագրում են բնության և հասարակության, հայրենի եզերքի նկատմամբ կրտսեր դպրոցականների վերաբերմունքը: Բնությունը ոչ միայն ուսումնասիրության օբյեկտ է, այլև սովորողների մտավոր, ֆիզիկական, բարոյական զարգացման աղբյուր: Մերը բնության, կյանքի հանդեպ ծնում է մարդասիրական ամենաբարձր զգացմունքներ:

Տարրական կրթության համակարգում «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկայի կրթական բաղադրիչը ունի իր ուրույն տեղը, քանի որ միավորում է երկու կրթական ոլորտ՝ բնագիտական և հասարակական: Այս առումով դասընթացի հիմնական նպատակը սովորողների սոցիալական փորձի, էկոբարոյական վարքագծի ձևավորումն է, «մարդ-բնություն-հասարակություն» համակարգում գործունեության ձևերի յուրացումը: Դասընթացի ուսուցման գործընթացում սովորողները ձեռք են բերում համագիտական գիտելիքներ, սովորում են համեմատել, ընդհանրացնել, համակարգել, եզրահանգումներ ձևակերպել և այլն:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի ուսուցման գործընթացը միտված է.

- վարքի բարոյական նորմերի յուրացմանը,
- սովորողի ընդհանուր մշակույթի ձևավորմանը,
- սոցիալական փորձի հարստացմանը, հաղորդակցական և համագործակցային կարողությունների ձևավորմանը,
- դպրոցական կյանքին հարմարմանը,
- բնության նկատմամբ հարգանքի, հոգատար վերաբերմունքի ձևավորմանը,
- դասընթացի էկոլոգիական ուղղվածության ապահովմանը,
- հայերի բնաշխարհի մասին գիտելիքների յուրացման ճանապարհով հայրենիքի պատմության իմացությանը, նրա հանդեպ հոգատար վերաբերմունքի և պատասխանատվության ձևավորմանը:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի բովանդակության ընտրության սկզբունքները

Ինտեգրման սկզբունքի համաձայն՝ անհրաժեշտ է միավորել, համադրել տարբեր գիտաճյուղերի գիտելիքները: Ժամանակակից դիդակտիկայում գիտելիքների ինտեգրումը ենթադրում է գիտելիքների համադրում, միավորում, ինչը նպաստում է աշխարհի ամբողջական պատկերի ընկալմանը:

Գիտականության սկզբունքն ընկած է դպրոցական ցանկացած դասընթացի հիմքում, սակայն դա չի նշանակում, որ ուսումնական առարկան պետք է լինի գիտության կրկնօրինակը, ճշգրիտ պատճենը: Գիտականությունը ենթադրում է, որ ուսումնական առարկայի բովանդակությունը պետք է պարունակի գիտականորեն ճշգրտված, հիմնավորված գիտելիքներ: Համաձայն այս սկզբունքի՝ ուսումնասիրության համար պետք է ընտրել այն նյութը, որն առավել ծանոթ է կրտսեր դպրոցականներին, նրա շրջապատում գոյություն ունի, տեսանելի է:

Մասշեղիության սկզբունքի համաձայն՝ ուսումնասիրվող նյութն իր ամբողջության մեջ պիտի համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, բխի նրանց ճանաչողական հետաքրքրություններից: Այն պահանջում է անցում պարզից դեպի բարդը, հայտնիից անհայտը, կոնկրետից ընդհանուրը:

Զննականության սկզբունքը կարևորում է ուսուցման գործընթացում սովորողների բոլոր զգայարանների մասնակցությունը, որը հնարավոր է դիտագնական պարագաների, միջոցների կիրառման շնորհիվ:

Շարունակականության, անընդհատության սկզբունքի համաձայն՝ դասընթացի յուրաքանչյուր բաղադրիչ պիտի հիմք լինի հաջորդի համար՝ առանց ժամանակային ընդհատումների:

Գիտակցականության և ակտիվության սկզբունքի համաձայն՝ ուսուցումը արդյունավետ է այն դեպքում, երբ աշակերտը պասիվ օբյեկտից վերածվում է սուբյեկտի, կատարում է որոշակի գործունեություն, ցուցաբերում է ճանաչողական ակտիվություն:

Գործնական ուղղվածության սկզբունքի համաձայն ուսումնական նյութը պիտի

ուսումնասիրվի գործնական ճանապարհով՝ կարևորելով յուրացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորությունը:

Էկոլոգիական ուղղվածության սկզբունքը պահանջում է ուսումնասիրել բնության մեջ գործող, ինչպես նաև մարդ-բնություն համակարգում առկա փոխադարձ կապերը:

Երկրագիտական սկզբունքը նպաստում է, որ կրթադաստիարակչական խնդիրները լուծվեն ակտիվ հասարակական, բնապահպանական գործունեության և հայրենի բնաշխարհի ճանաչողության համատեքստում:

Կրտսեր դպրոցականների կողմից գիտելիքների յուրացման արդյունավետությանը նպաստում են մի շարք գործոններ՝

- զննական պարագաների օգտագործում, ընդ որում առաջնություն պետք է տալ բնական օբյեկտների օգտագործմանը,
- հետազոտվող առարկայի և երևույթի խոսքային տպավորիչ նկարագրություն,
- գործնական աշխատանքների իրականացում՝ ներգրավելով սովորողի զգայարանները,
- առարկաների, երևույթների գիտակցական մտապահմանը միտված գործընթացներ, բազմակողմանի նկարագրում, պրոբլեմային հարցերի առաջադրում, ստեղծագործական-որոնողական առաջադրանքների կատարում,
- գործնական-հետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա գծակարգերի, աղյուսակների կազմում, լրացում, մեկնաբանում,
- հետազոտվող առարկաների, երևույթների համեմատական բնութագրերի կազմում, ներկայացում:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա

«Ես և շրջակա աշխարհը» դասընթացի շրջանակներում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների մտավոր զարգացմանը, ակտիվացնում է ուսուցման գործընթացը, ձևավորում հետաքրքրություն ուսումնասիրվող նյութի նկատմամբ:

Պրոբլեմային իրավիճակների առաջադրումը օգնում է բացահայտելու բնության մեջ գործող փոխադարձ կապերը, որոնողական հնարների միջոցով պարզելու անկենդան և կենդանի բնության ծագման ու զարգացման օրինաչափությունները, ձեռք բերելու ինտեգրված գիտելիքներ և այդ գիտելիքները կիրառելու առաջադրված խնդրի լուծման համար:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան հատկապես նշանակալի է կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման տեսանկյունից: Այն նպաստում է նաև համագործակցության, մտածելու, միտքը ձևակերպելու, գաղափարը հստակեցնելու և հիմնավորելու կարողությունների զարգացմանը: Ինչ խոսք, այս տեխնոլոգիան ունի և՛ կրթական, և՛ դաստիարակչական ներուժ: Այնուհանդերձ պետք է նշենք, որ պրոբլեմային ուսուցման հիմնական թերությունը նրա ժամանակատար լինելն է:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված առարկայի շրջանակներում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման օրինակներ:

	Պայմաններ	Հարց	Մեթոդ	Միջոց	Ձև
1.	Պրակտիկ գործունեության կազմակերպում	Կանաչ տերևները աշնանը սկսում են դեղնել: Ինչո՞ւ	Դիտում, նախագծում	Թուղթ, մատիտներ, քանոն, տերևներ	Դաս էքսկուրսիա մոտակա զբոսայգում, պուրակում
2.	Տեսական բացատրություն (կյանքի իրավիճակներ, փաստեր)	Արմատը, ցողունը, տերևը կոչվում են բույսերի սնման օրգաններ: Ինչո՞ւ	Դերային խաղ, տեսանյութի ցուցադրում, սահիկահանդես	Կենդանի բնության օբյեկտներ, հերբարիումներ	Խմբային աշխատանք
3.	Համեմատություն, համադրում, հակադրում	Ի՞նչ կարող է անել մարդը և ի՞նչ չի կարող անել կենդանին	Բանավեճ, մտազրոհ	Նկարներ, պաստառներ	Ուսումնական երկխոսություն
4.	Նոր գիտելիքների ձեռք բերում, ընդհանրացում	Ինչո՞ւ առանց կանաչ բույսերի կյանքը անհնար կլինի երկիր մոլորակում	Փոխներգործուն մեթոդներ, ակվարիում, բարձրախոս	Աշխատանք դասագրքով, նկարներ	Զույգերով աշխատանք
5.	Հետազոտական առաջադրանքներ	Կենդանիները կարո՞ղ են արդյոք մարդկանց պես հուզվել, տխրել:	Դիտում, արձանագրում	Ընտանի կենդանիներ,	Լաբորատոր պարապմունք,

Ուսուցման այս տեխնոլոգիայի կիրառման արդյունքում սովորողները ձեռք են բերում գիտական գիտելիքներ, ձևավորվում են հետազոտական կարողություններ ու հմտություններ, խթանվում են նրանց ճանաչողական ակտիվությունը, հետաքրքրասիրությունը, զարգանում են ստեղծագործական, տրամաբանական մտածողությունը և այլ արժեքավոր անձնային որակներ:





Նախագծային ուսուցման տեխնոլոգիա

Տեղեկատվության հարաճուն հոսքի պայմաններում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ժամանակի հրամայականն է: Արդի դպրոցի առջև ծառայել է այնպիսի քաղաքացու դաստիարակության խնդիրը, որն ունակ կլինի ինքնուրույն վերլուծել, գնահատել և ընտրել ստացված տեղեկատվությունը:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի նպատակը տարաբնույթ խնդիրների ինքնուրույն լուծման կարողությունների ձևավորումն է, սովորողների ինքնագարգացման ապահովումը:

Տարրական դպրոցում այս տեխնոլոգիայի կիրառման հիմքում ճանաչողությունն է, որը նպաստում է տարբեր իրավիճակներում սովորողների հարմարմանը, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերմանը և գործնականում կիրառմանը:

«Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկայի շրջանակներում կարելի է կազմակերպել և իրականացնել փոքրիկ նախագծեր, օրինակ՝

- խաղերի նախագծեր՝ կենդանիներին, բույսերին նվիրված տարբեր խաղեր, ժողովրդական պարեր, ներկայացումներ, որոնք ունեն բնաճանաչողական նշանակություն և միտված են խմբային աշխատանքի զարգացմանը,
- էքսկուրսիոն նախագծեր, որոնք հատկապես կիրառելի են մարդ-բնություն-հասարակության համակարգում դիտվող հիմնախնդիրների ուսումնասիրման համար՝ «Հայրելի բնաշխարհի գանձերը», «Մենք և տիեզերքը», «Մարդը բնության զավակն է» և այլն,
- պատմողական նախագծեր՝ ուսուցանվող նյութի վերաբերյալ որևէ լրացուցիչ պատմության ներկայացում բանավոր, գրավոր, բեմանակացմամբ, երաժշտության ուղեկցությամբ, երգեցողությամբ. հեքիաթներ, պատմվածքներ, ավանդազրույցներ և այլն,

- կառուցողական նախագծեր՝ օգտակար առարկաների՝ թռչնի բների, թակարդների, պատրաստուկների, չորացրած տերևներով, ծաղիկներով կոմպոզիցիաների պատրաստում, օգտակար գործունեություն՝ ծառատունկ, բնապահպանական արշավների, շաբաթօրյակի կազմակերպում, և այլն:

Ուսումնական նախագծերի ժամանակակից դասակարգման հիմքում առաջնային գործոն է սովորողների գործունեությունը: Այդ առումով տարբերում ենք՝

- գործնական նախագծեր՝ ուսումնական ձեռնարկներ, հանձնարարականներ, էքսկուրսիաներ, ճանապարհորդություն և այլն,
- հետազոտական նախագծեր՝ որևէ խնդրի գիտական հետազոտում,
- տեղեկատվական նախագծեր՝ տեղեկույթի հավաքագրում, մշակում, համակարգում, ներկայացում, հանդիպումներ, երեկոներ,
- ստեղծագործական նախագծեր՝ որևէ խնդրի, հարցի վերաբերյալ հեղինակային մոտեցում՝ միջոցառումների իրականացում, տեսանյութերի, դիտագնական պարագաների պատաստում, հեքիաթների, առակների, ասացվածքների յուրովի մեկնաբանում, բեմականացում և այլն,
- դերային նախագիծ՝ դերային, մարզական խաղերի կազմակերպում, խաղ-վիկտորինաների նախագծում:

«Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկայի շրջանակներում կարելի է կազմակերպել և իրականացնել փոքրիկ նախագծեր, օրինակ՝

- խաղերի նախագծեր՝ կենդանիներին, բույսերին նվիրված տարբեր խաղեր, ժողովրդական պարեր, ներկայացումներ, որոնք ունեն բնաճանաչողական նշանակություն և միտված են խմբային աշխատանքի զարգացմանը,
- էքսկուրսիոն նախագծեր, որոնք հատկապես կիրառելի են մարդ-բնություն-հասարակության համակարգում դիտվող հիմնախնդիրների ուսումնասիրման համար՝ «Հայրելի բնաշխարհի գանձերը», «Մենք և տիեզերքը», «Մարդը բնության զավակն է» և այլն,
- պատմողական նախագծեր՝ ուսուցանվող նյութի վերաբերյալ որևէ լրացուցիչ պատմության ներկայացում բանավոր, գրավոր, բեմականացմամբ, երաժշտության

ուղեկցությամբ, երգեցողությամբ. հեքիաթներ, պատմվածքներ, ավանդազրույցներ
և այլն,

- կառուցողական նախագծեր՝ օգտակար առարկաների՝ թռչնի բների, թակարդների, պատրաստուկների, չորացրած տերևներով, ծաղիկներով կոմպոզիցիաների պատրաստում, օգտակար գործունեություն՝ ծառատունկ, բնապահպանական արշավների, շաբաթօրյակի կազմակերպում, և այլն:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված առարկայի դասավանդման գործընթացում նախագծային ուսուցման տեխնոլոգիան, անշուշտ, ունի իր ուրույն տեղը և նպաստում է կրտսեր դպրոցականների ճանաչողական ակտիվության խթանմանը, ստեղծագործական և որոնողական կարողությունների զարգացմանը:



